ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2024 թվականի թիվ 134 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023Թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 12-րդ և 13-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 16.05.2024թ թիվ 02/3-3/10173-2024 գրությունը

ո ր ո շ ո ւ մ ե մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայության 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների 2023թ տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափերը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ընկերությունների տնօրեններին սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը, ապահովել շահութաբաժնի փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200424 հաշվին:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա. Բաբլումյանի վրա:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-05-27 16:33:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2024 թ. մայիսի 27